Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Հորդառատ անձրևներից հետո պարզվել է, որ հրատապ հիմնանորոգման կարիք ունի քաղաքապետարանի վարչական շենքի տանիքը: Տանիքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ պատվիրելու համար առաջարկվում է բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների համար նախատեսված միջոցները՝ 1200,0 հազար դրամ տեղափոխել քաղաքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերմանը:

Համայնքում որոշակի անհատ ձեռներեցներ դադարեցրել են իրենց գործունեությունը, որի հետևանքով 2019թվականի բյուջեի վարչական մասի եկամուտներում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն, մասնավորապես՝ տեղական տուրքերի մասով անհրաժեշտ է նվազեցնել այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվությունների մասով՝ 434 250 դրամ, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների մասով՝ 60 000դրամ, հեղուկ վառելիքի, սեղմված և բնական գազերի վաճառքի թույլտվության մասով՝ 100 000 դրամ: Անասնաբուժական ծառայությունների համար տեղական վճարները անհրաժեշտ է նվազեցնել 400 000 դրամով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բնակիչները չեն դիմել անասնաբույժին ծառայություններից օգտվելու համար և չի ապահովվել նախատեսված պլանային առաջադրանքը:

Համայնքի արտաքին լուսավորման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռք բերման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել սպասարկման աշխատանքների ծախսերի միավորի հաշվարկ, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 50 000 դրամ:

2019 թվականի ընթացքում ավելացել են սոցիալական հատուկ արտոնությունների հուղարկավորության նպաստների համար դիմումատուները, որի հետևանքով բյուջեում նախատեսված միջոցները չեն բավարարում : Առաջարկվում է այլ նպաստների համար նախատեսված միջոցներից 250 000 դրամ հատկացնել հուղարկավորության նպաստներին:

<<Սիս>> ՓԲԸ-ն 30.06.2019թվականից դադարեցրել է իր գործունեությունը և պետական բյուջեի հանդեպ ունի 131 000 դրամ հարկային պարտավորություն, դիմել է

խնդրանքով՝ տրամադրելու սուբսիդիա հարկային պարտավորությունները մարելու նպատակով:

Վարչական բյուջեում եկամուտների նվազեցումը հաշվեկշռելու և անհրաժեշտ ծախսերը ապահովելու նպատակով առաջարկվում է նվազեցնել Օրենսդիր և գործադիր մարմինների գործառական դասակարգմամբ գրասենյակային նյութերի ձեռք բերման հոդվածով նախատեսված միջոցները 1 175 250դրամով:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան